

ԱՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՕՍՄԱՆԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

(Նկարագրման մեթոդաբանությունը)

Երևույնի Մեսրոպ Մաշտոցի անվան Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ Մատենադարանը հնագույն ձեռագրերի հարստությամբ համաշխարհային մշակույթի գանձատններից է, համախմբում է բազմալեզու 18390 ձեռագիր միավոր, որից 14432-ը հայ ժողովրդի մշակութային ձեռագիր հարստության մեծ հատվածն է, 2249՝ արաբատառ (արաբերեն, պարսկերեն, օսմաներեն) ձեռագրեր են, 147-ը՝ արաբատառ պատառիկներ, 54-ը արաբատառ հմայիլներ են: Արաբատառ ձեռագրերից 336-ը օսմաներեն են: Իհարկե, այս թիվը կարող է աճել, որովհետև վերջին տարիներին հազարից ավելի նվիրաբերված ձեռագրերից շուրջ 800-ը արաբատառ են եւ դեռևս ըստ լեզուների խմբավորված չեն:

Մատենադարանի արաբատառ ձեռագրերի հավաքածուի նախնական նկարագրությունն ընդգրկված է քսաներեք ձեռագիր մատյաններում:

Ձեռագիր մատյանները նախապես խորագրված են եղել որպես «Յուզակ արաբերեն - պարսկերեն - ուզբեկերեն - ադրբեջաներեն ձեռագրերի» (فهرست کتب و دستخط عربی و - فارسی و اوزبکی و آذربایجانی, հետագայում կոնկրետացվել են «Յուզակ արաբատառ ձեռագրերի» խորագրով: Առաջին մատյանի տիտղոսաթերթի արտաքին լուսանցքում նշված է մատյանի կազմողի՝ Հովհաննես Ղուկասյանի անունը եւ կազմվելու՝ 1948 թվականը (از طرف او هانس خوقسيان منظوم شد در سنة ١٩٤٨ میلادی): Սակայն մյուս մատյանները կազմողների, աշխատանքների ժամանակագրական հաջորդական ընթացքի, կատարման հետևողականության եւ ամբողջացման վերաբերյալ ակնարկ իսկ չկա հաջորդող մատյաններում:

Հետևաբար օսմաներեն ձեռագրերը լիակատար ներկայացնող նոր մատյաններ ստեղծելու մեր առջև դրված առաջադրանքը իրականացնելու համար առաջնահերթորեն ձեռնարկեցինք եղած մատյանների դիտարկման աշխատանքը՝ ընդհանուր եւ մասնավոր պատկերացում կազմելու, նախկինում թափված ջանքերը գնահատելու, օգտակարը քաղելու եւ կիրառելու անհրաժեշտությամբ:

Ձեռագրերը նկարագրել են տարբեր անձինք, տարբեր ժամանակներում: Նկարագրողները, թեև տիրապետել են պահանջվող լեզուներին (արաբերեն, պարսկերեն, օսմաներեն), բայց կամ չեն ունեցել ձեռագրագիտական հմտություն, կամ խնդրի լուծման հրատապությունից ելնելով կատարել են առժամյա աշխատանք:

Ձեռագիր մատյանների նկարագրությունները երկլեզու են՝ պարսկերեն կամ արաբերեն, գուգահեռաբար հայերեն թարգմանությամբ:

Ընդհանուր առմամբ նշվել են ձեռագրի թվահամարը, վերնագիրը, թերթերի քանակը, մեծությունը, նյութը, կազմը, երբեմն նաեւ կազմի ներքին կողմը, վիճակը, գրություն-

նը, դատարկ թղթերը, տողերը, լեզուն, գծումները, գրիչը, հեղինակը, ժամանակը, տեղը, բովանդակությունը, ծանոթագրությունները, երբեմն հիշատակագրությունները, սկզբնագրերը եւ վերնագրերը, լուսանցագրությունները, զարդագրությունները: Որոշ մատյաններում ձեռագրերի նկարագրության սկզբունքը համառոտվել է, նշվել են գլխավորապես՝ վերնագիրը, հեղինակը, ժամանակը, լեզուն, գրիչը, թերթը, չափը, տողը, բովանդակությունը, ծանոթագրությունը: Բնականաբար, օսմաներեն ձեռագրերի ոչ կայուն հետեւողականությամբ կատարված խիստ ընդհանուր նկարագրությունները, կարող ենք ասել, միանգամայն չեն մատուցում ձեռագրերի ամբողջական պատկերը:

Անճշտություններ են պարունակում գրված եւ չգրված թերթերի քանակային պատասխանները: Չեն վկայված նյութի տեսակային եւ որակային հատկությունները, հաճախ բավարար են համարվել «թուղթ», «մագաղաթ» նշումները: Անհամապատասխանություններ կան չափագրման տվյալներում: Երբեմն գրության ձևին (միասյուն, երկսյուն) եւ գրին պատասխանելիս ներառվել են նաեւ գրչատեսակը, տողերի քանակը (տողերի քանակը բերվել է միայն առաջին էջի տողերի քանակով): Կազմը ներկայացվել է միայն գույնով: Անդրադարձ չկա պահպանակներին: Գրչության ժամանակի եւ հետագայի հիշատակարանները, գրչափորձերը, կնքադրոշմները, լուսադրոշմները երբեք չեն վկայվել: Ձեռագրի վիճակը բնորոշվել է միայն «բավարար», «լավ», «շատ լավ», «նորոգված» գնահատականներով: Բովանդակությունն ընդգծվել է մեկ բառի նշումով՝ կրոնական, քերականություն, բանաստեղծություններ, իրավագիտություն, տրամաբանություն, բժշկություն եւ այլն: Երբեմն ձեռագրի լեզուն սխալ է որոշվել: Պարսկերեն եւ արաբերեն ձեռագրերը ներկայացվել են որպես օսմաներեն եւ հակառակը:

Այսպիսով, արաբատառ մատյանների այս դիտարկմամբ ճշտվեց օսմաներեն ձեռագրերի մոտավոր քանակը, որոշակիորեն պարզվեցին ձեռագրերի նկարագրման մակարդակը, բովանդակային պատկերը:

Հետեւաբար, ըստ բովանդակության ձեռագրերը խմբակարգվեցին՝ գրականություն, պատմություն, կրոնական, իրավագիտություն, բժշկություն, տոմարագիտություն, տաղաչափություն, ճարտասանություն, աստղագիտություն, տիեզերագիտություն, թվաբանություն, երկրաչափություն, քերականություն, բառարաններ, հմայագրեր, նամականիներ, ֆերաիզներ (ժառանգության բաշխման կարգ):

Ունենալով Մատյանների արդյունքները, օգտվելով այլալեզու կատալոգների¹ ուղղորդիչ եւ ինտերնետային կապի տեղեկատվական հնարավորություններից, այնուամենայնիվ, օսմաներեն ձեռագրերի նկարագրման ու ցուցակագրման համար կիրառվում է հայերեն ձեռագրերի նկարագրման եւ ցուցակագրման ընդհանրական կադապարը՝ հետեւյալ կետերով. ձեռագրի թվահամար, վերնագիր, գրչության վայր, գրչության թվական, թերթերի քանակ, չգրված թերթեր, պրակ, նյութ, մեծություն, գրություն,

¹ Catalogue of The Turkish Manuscripts in British Museum by Charles Rieu. Osnabrück, 1978. Catalogue of Turkish Manuscripts in the Library of the Hungarian Academy of Sciences. Composed by Ismail Parlatur, György Hazai and Barbara Kellner-Heinkele, 2007. Gustav Flügel, Die arabischen, persischen, türkischen Handschriften der k.u.k. Hofbibliothek zu Wien I, 1977.

գիր, տող, կազմ, պահպանակ, վիճակ, բովանդակություն, գրչության ժամանակի հիշատակարան, հետագայի հիշատակարան, կնքադրոշմ, ճնշադրոշմ, գրչափորձ, նշում, մանրանկարչություն:

Պատկերացնելու համար բերենք նկարագրման մի քանի կետեր:

«Նյութ»-ի տակ նշվում է թղթի ինչպիսին լինելը, եթե թուղթն ունի՝ լուսագծեր, ճնշագծեր եւ լուսադրոշմներ, հատկապես լուսադրոշմները մեկ առ մեկ թվարկվում են եւ բերվում են թերթերը:

«Կազմ»՝ նշվում են կազմի տեսակը (կաշի, լաթ, մոմլաթ եւ այլն), գույնը, եթե ունի զարդարանք՝ նկարագրվում է, այնուհետեւ՝ միջուկը (տախտակ, ստվարաթուղթ եւ այլն), աստառը (թուղթ, ծաղկաթուղթ, կարմիր մոմլաթ եւ այլն):

«Պահպանակ»՝ պահպանակները համարակալվում են հայերեն տառերով: Նշվում են պահպանակների քանակը, տառային միավորները, թղթի տեսակը:

«Վիճակ»՝ արձանագրվում են ձեռագրի ընդհանուր վիճակը՝ կազմի, թերթերի, գրադաշտի վնասվածության աստիճանը, ձեռագրի պակասավոր լինելու հանգամանքը, եթե ձեռագիրը նորոգվել է, բնութագրվում են նորոգման աշխատանքները եւ այլն:

«Հիշատակարան գրչության ժամանակի» եւ «Հիշատակարան հետագայի»՝ բերվում են հիշատակարանները՝ էջերի նշումով եւ երբեմն հայերեն թարգմանությամբ:

«Կնքադրոշմ», «ճնշադրոշմ»՝ նշվում են էջը, ձեւը, կնքադրոշմի ժամանակ՝ նաեւ թանաքի գույնը, այնուհետեւ՝ վերծանությունը: Արտաքին տվյալները առնվում են փակագծերի մեջ, իսկ վերծանությունը՝ չակերտների:

«Գրչափորձ»՝ հիմնականում նշվում են էջերը, եթե բովանդակային առումով կարելի է՝ գրի է առնվում:

«Նշում»՝ գրադարանային նշումները էջերով բերվում են, նվիրատուների անունները, որոնք այլ թղթով փակցված են լինում հիմնականում ձեռագրի կազմաստառին, ինչպես նաեւ ուսումնասիրողների ձեռագրին վերաբերող նշումները:

«Մանրանկարչություն»՝ նշվում են տեսակը (խորան, կիսախորան, ճակատագաղ, լուսանցագաղ, զարդագիր եւ այլն), էջը, մանրանկարում օգտագործված գույները:

«Բովանդակություն»՝ թվարկվում են ձեռագիր-բնագրի կամ բնագրերի էջերը, ապա համառոտ կերպով հայերենով ներկայացվում է բովանդակությունը, բերվում են օսմաներեն բնագրի սկիզբն ու վերջը: Եթե բուն բնագիրը բաղկացած է գլուխներից, գլուխներն էլ իրենց հերթին ենթամասերից, թվակվում են նաեւ վերջիններս էջերով:

Երբեմն բովանդակության մաս է դառնում ծանոթագրությունը, ուր լուսանցքներում եղած բնագրին վերաբերող հավելագրություններն են բերվում՝ էջերի նշումով, ինչպես նաեւ նշվում է որեւէ այլալեզու կատալոգ, որտեղ կա տվյալ ձեռագրի մեկ այլ օրինակի նկարագրությունը: Այս դեպքում հղվում է կատալոգը, ձեռագրի համարը եւ էջը: Երբ գտնվում են բնագրին առնչվող այլ նյութեր՝ հոդվածներ, աշխատություններ, ապա բերվում են այդ նյութերի աղբյուրները: Գրի են առնվում նաեւ բնագրին վերաբերող հավելյալ տեղեկություններ՝ աղբյուրի նշումով:

Օսմաներեն ձեռագրերի հավաքածուն հիմնականում՝ ԺԶ.-ԺԹ. դարերի է:

Ներկայումս Մատենադարանի նկարագրված օսմաներեն ձեռագրերից ժամանակագրության առումով հնագույնը թիվ 196 ձեռագիրն է, որի գրչության ժամանակն է հջր. 972 [1564-65 թթ.]: Ձեռագրում ընդգրկված է երկու աշխատություն: Առաջին աշխատությունը՝ [رسالة يائيه في لسان الفرسى من مولفات كمال پاشا زاده رحمه الله] վերաբերում է պարսկերենում բառավորչի ى ձայնավորի իմաստային տարբերակումներին: Աշխատության հեղինակը ձեռագրում նշված չէ, ենթադրությունը, որ հեղինակը Քեմալ Փաշա Ջադեն է, այսինքն՝ Մեւլանա Իմամ Շեմսեդդին Ահմեդ իբն Սուլեյման իբն Քեմալը, մեկնվում է այլալեզու ձեռագրագուցակների նկարագրությունների համեմատությամբ²: Իսկ երկրորդ աշխատությունը՝ دقایق الحقائق «Դագափր ալ հագափր» («Նրբագույն ճշմարտություններ») նախաբանից իսկ հայտնի է դառնում, որ այն նվիրված է Սուլթան Սուլեյման Առաջինի վեզիր Իբրահիմ Փաշային: Այս գործի հեղինակը, ինչպես հաստատում է այլալեզու ձեռագրագուցակի նկարագրությունների համեմատությունը, նույնպես Մեւլանա Իմամ Շեմսեդդին Ահմեդ իբն Սուլեյման իբն Քեմալն է: Աշխատությունը հիմնականում վերաբերում է պարսկերենում հոմանիշների տարբերակումներին, որոնք մեկնվում են պարսկերեն բնյթների միջոցով³:

Մատենադարանի թիվ 334 եւ թիվ 394 ձեռագրերը նախնական նկարագրության մեջ համարվել են միայն պարսկերեն ձեռագրեր: Ուսումնասիրելով սույն ձեռագրերը՝ նկատվեց, որ ձեռագրերում պարսկերենին հաջորդում են օսմաներեն եւ արաբերեն հատվածներ: Թիվ 334 ձեռագիրը կրոնական բովանդակությամբ եռալեզու, արձակ եւ չափածո մասերից բաղկացած աշխատություն է՝ Քերեթլայի ճակատամարտի (680 թ.), շիա իմամների նահատակության մասին: Գրչության ժամանակն է հջր. 1301 [1883-84 թթ.]: Իսկ թիվ 394-ը Միր Հուսեյնին նվիրված եռալեզու աշխատություն է (بين احوالات مير حسين): Գրչության ժամանակն է հջր. 1289 [1872-73 թթ.], գրիչը՝ Ջավադ Հուսեյնը: Պակասավոր է վերջից: Ձեռագրում միացված են երկու ձեռագրեր (թիվ 393, թիվ 394): Աշխատությունը սկսվում է արաբերեն առաջաբանով, ուր հեղինակը նշում է, որ Մուհամմեդ մարգարեի ժառանգներին պատահած դժբախտությունների մասին իր այս ժողովածուն գրելիս օգտվել է Ղուրանից, հադիսներից: Աշխատության օսմաներեն հատվածը կրոնական քասիդներ են: Քասիդներն առանձնացված չեն վերնագրերով եւ հաջորդում են նույնաբովանդակ պարսկերեն քասիդներին:

Նկարագրված օսմաներեն ձեռագրերից 14-ը գրականությանն են վերաբերում. ԺԶ.-ԺԷ. դարերի թուրք բանաստեղծներ Վեյսիի (թիվ 197), Նեֆիի (թիվ 223), Բաքիի (թիվ 321)⁴, Ֆահիմի (թիվ 323) դիվաններ՝ ԺԷ. դարի ձեռագրեր, Շեյխի «Մոսրով եւ Շի-

² Տե՛ս նույն ձեռագրի այլ օրինակներ՝ Catalogue of The Turkish Manuscripts in British Museum by Charles Rieu, p. 142, Or. 36. նաեւ Gustav Flügel, Die arabischen, persischen, türkischen Handschriften der k.u.k. Hofbibliothek zu Wien I, 1977, New York, էջ 131-2:

³ Տե՛ս ձեռագրի այլ օրինակներ՝ Catalogue of The Turkish Manuscripts in the British Museum by Charles Rieu, Add. 7887, էջ 141-2. Catalogue of the Persian Manuscripts in the British Museum by Charles Rieu, v. II, Add. 7887, էջ 514. Gustav Flügel, Die arabischen, persischen, türkischen Handschriften der k.u.k. Hofbibliothek zu Wien I, 1977, New York, էջ 130-1:

⁴ Թիվ 321 ձեռագրի՝ «Բաքիի դիվան»-ի հիշատակարանից պարզ է դառնում, որ գրիչը Հասան իբն Մուհամմեդն է, գրչության վայրը՝ Ենիշեհիր, գրչության ժամանակը՝ հջր. 1016 [1607-8թթ.], 126ա:

րին» (خسرو و شیرین) պոեմ (թիվ 302)՝ ԺԷ. դար, Շամսի «Տաս թռչունների պատմություններ» (حکایه ده مرغ شمسى) (թիվ 646)՝ ԺԸ. դար, գրիչը՝ Օմեր իբն Օսման ալ Հաքիր, «Քառասուն վեզիրների պատմություններ» (حکایه قرق وزیر) (թիվ 563, թիվ 1889), Նաբիի «Մայրիկ» (خیر آباد لنابی مرحوم) (خیریه نابی), «Թուհիքե-ի դիրքեշ» (تحفة دلکش) եւ «Մայրաքաղ» (ترجمة اسکندر نامه), «Լեյլի եւ Մեջնուն» (ترجمة خسرو شیرین), «Բահրամ Գուր» (ترجمة بهرام گور), «Մուսրով եւ Ծիրին» (ترجمة لیلی و مجنون) (թիվ 296, թիվ 297)՝ ԺԸ. դար, Նիզամիի «Իսքենդեր նամե» (ترجمة اسکندر نامه), «Լեյլի եւ Մեջնուն» (ترجمة خسرو شیرین) (թիվ 1749)՝ ԺԹ., գեղեցիկ մանրանկարներով, Աշրք Ղարիբի «Շահգադե» պատմվածք (هذا حکایت) (թիվ 1262)՝ գրչության ժամանակը հջր. 1245 [1829-30 թթ.], Անանուն հեղինակի փոքրիկ բանաստեղծությունների գրքույկ (թիվ 1861), Նեբիաթների, պատմվածքների տեսք (نفتۂ حکایات و روایات) (թիվ 413)՝ ԺԹ.:

Օսմաններեն ձեռագրերի մեջ բավականին թիվ են կազմում ֆերաիզները, որոնցից դեռևս թեմատիկ ուսումնասիրվել են երկու՝ թիվ 985, 1454 ձեռագրերը: Թիվ 985 ձեռագրի (شرح الفرائض) գրչության ժամանակն է հջր. 1061 [1650-51 թթ.], գրիչը Մուստաֆան է, հայտնի Մելիքի Հուսեյն Էֆենդի Ջադե անունով: Նախաբանում վկայվում է, որ աշխատությունը թուրքերեն է թարգմանել Դուրսուն Ջադեն եւ հնարավորին չափ մոտեցրել է բնագրին, ճշգրիտ նկարագրել եւ բացատրել է տերմին-բառերը, պահպանել է բնօրինակի բառերի դասակարգումը: Աշխատության վերջաբանում գրիչը տեղեկացնում է, որ Իբն Դուրսունը հավաքել է ժառանգության բաշխման խնդիրներին վերաբերող արժեքավոր նյութեր եւ լրացումներով հարստացրել է հիշյալ աշխատությունը: Աշխատությունը գրվել է հջր. 1008-ին [1599-1600 թթ.]:

Մատենադարանի թիվ 412, 436, 633, 1803, 2110 ձեռագրերը հայտնի են Դարենդեվի օրացույցներ⁵ անունով: Այս մասին է վկայում թիվ 633 ձեռագրի ճակատագարդի ստորին հատվածում գրված վերնագիրը՝ هذا روزنامه دارندوی: Համեմատելով թիվ 633 ձեռագիրը թիվ 412, 436, 1803, 2110 ձեռագրերի հետ, նկատելով կառուցվածքային եւ բովանդակային նմանությունները՝ անշփոթելիորեն տեսանելի է, որ այս օրացույցները նույնպես Դարենդեվի օրացույցներ են ԺԸ.-ԺԹ. դարի: Ձեռագրերը ժապավենած են, նյութը՝ թուղթ, մագաղաթ, գիրը՝ ռիկա, նասխ, բաղկացած են հիմնականում 13 աղյուսակներից:

Իրենց հետաքրքիր բովանդակությամբ ուշադրություն են գրավում թիվ 140, 228, 299, 346, 656, 1096 ձեռագրերը: Թիվ 140 ձեռագիրը «Գոհարագիր» է (جوهر نامه)՝ ԺԹ. դար: Ձեռագիրը բաղկացած է 32 գլխից: Գլխներից յուրաքանչյուրը մի թանկարժեք քարի մասին է, քարերը ներկայացվում են անուններով, տեսակներով, արժեքով, օգտակարությամբ, ծագումով, գտնվելու եւ հայտնաբերման վայրով, գույներով եւ այլն: Ձեռագրի պակասավոր լինելու հանգամանքը նկատի ունենալով՝ դժվար է ձեռագրի հեղինակի եւ գրչի վերաբերյալ ստույգ տեղեկություններ տալ:

⁵ Օրացույցի կազմողը եղել է Դարենդեից՝ քաղաք Սեբաստիա (Սվաս) վիլայեթում, քաղաքի անունով էլ անվանվել է օրացույցը: Օրացույցի ստեղծողը եղել է ուն Սեհմեդ. տե՛ս “Турецкий Вѣчный Календарь Дарендѣви”, С. Петербургъ, 1883, էջ 23:

Թիվ 228 ձեռագիրը «Գավազանագիրք» է (اسامی شریفه لر)՝ գրչության ժամանակն է հջր. 1314 [1896-97 թթ.], գրիչն է Միրզա Աբդուլ Հասան Բադիզադեն։ Ձեռագիրը Օսմանյան նախամեծար տերության սկզբնավորումից մինչև ներկա վսեմաշուք գահակալի ժամանակները՝ կայսրության գահին բազմած օսմանյան փառապանծ սուլթանների ծննդյան, գահակալության, մահվան (կամ գահազրկման), իշխանության և կյանքի տևողության թվականների [հիշրայով] և նրանց փառավոր դամբարանների վերաբերյալ ցուցակ է։

Թիվ 299 ձեռագիրը Օսմանյան կայսրության վարչական-բաժանումների՝ 22 վիլայեթների և 62 սանջակների և նրանց կազմի մեջ մտնող ենթավարչական միավորների ցանկ է՝ ԺԹ. դարի ձեռագիր։

Թիվ 346 ձեռագիրը «Հյուղագրություն» է (سلسله نامه)՝ ԺԹ. դարի ձեռագիր։ Հյուղագրությունը սկսվում է Ադամից, հասնում մինչև Մուհամմեդ մարգարեն՝ տոհմաձառնով։ Այս տոհմային հաջորդականությամբ էլ ներկայացվում են մարգարեների, խալիֆների (Օմմայան, Սաֆաւյան, Աբբասյան) շահերի, մելիքների, փադիշահների, սուլթանների (Օսմանյան կայսրության), իմամների սերնդավորությունը, գահակալման հաջորդականությունը։

Թիվ 656 ձեռագիրը «Տոնահանդեսների գիրք» է (ضیافت نامه)՝ ԺԸ. դարի ձեռագիր։ Բովանդակում է Օսմանյան կայսրության սուլթանների և պաշտոնյաների մեծարման ավանդական հանդեսների նկարագրությունները։

Թիվ 1096 ձեռագիրը Բայբուրթի գրադարանի գրքերի ցուցակ (بایبورت کتبخانه سنک کتب)՝ ԺԹ. դարի ձեռագիր է, գրչության վայրը՝ Բայբուրթ, գրիչը՝ Ահմեդ Ջիա Էդդին։ Կանոնավոր հերթականությամբ տրվում են տպագիր գրքի կամ ձեռագրի թվահամարը, վերնագիրը, քանակը, հատորը, գիրը և տողը։ Գրքերն ու ձեռագրերը դասակարգված են թեմատիկ՝ հատորների և կտորների քանակների նշումով։

Կան մոտ չորս տասնյակ երկվեզու և եռվեզու ժողովածուներ, որոնք ընդգրկում են օսմաներեն-պարսկերեն, օսմաներեն-արաբերեն, արաբերեն-պարսկերեն, պարսկերեն-օսմաներեն-արաբերեն տարբեր աշխատություններ, զանազան գրվածքներ ինչպես գրչության ժամանակի, այնպես և հետագայի։

Արդեն իսկ նկարագրվել և ցուցակագրվել են 20 նմանատիպ ժողովածուներ, որոնց հիմնական լեզուն պարսկերեն և օսմաներեն են։ Դրանք Մատենադարանի թիվ 55, 252, 371, 528, 577, 658, 660, 741, 779, 848, 872, 937, 939, 965, 1035, 1147, 1221, 1234, 1235, 1449 ձեռագրերն են։ Այս ժողովածուների առաջնային դիտարկումը հիմնապես կապված է պարսկերեն ձեռագրերի կատալոգի ստեղծման աշխատանքների հետ։

Պատրաստվող ձեռագրացուցակի մեջ ընդգրկվող հիշյալ ձեռագրերից կարելի է այստեղ դիտարկել գոնե մի քանիսի օսմաներեն նյութերը։

Այսպես՝ թիվ 252 ձեռագրի «Դերբենդ նամե՝ Դադստանի պատմություն»-ը کتاب در بند نامه با احوالات داغستان از اقرار تاریخ

⁶ Առաջին Սուլթան Օսման Խան Ղազի իբն Էթթողրուլ Խան Ղազի իբն Սուլեյման Շահից հջր. 699 (1299 թ.) մինչև 31-րդ Սուլթան Աբդուլ Մեջիդ Խան իբն ալ Սուլթան ալ Ղազի Մահմուդ Խանի գահակալումը հջր. 1299 (1839-40 թթ.)։

ներեն, արաբերեն ձեռագրով: Օսմաներենն ընդգրկում է Դերբենդի (Դադաստան) հիմնադրությունից մինչև հջր. 115 [733-4 թթ.] տեղի ունեցած իրադարձությունների պատմությունը: Ավարտվում է Աբու Մուսլիմ իբն Աբդալ Մալիքի դեպի Դերբենդ արշավանքների նկարագրությամբ: Գրչության ժամանակն է հջր. 1269 [1852-53 թթ.], գրիչը Մուլա Միրզա Ալի Էֆենդի ալ Շեհիրն է:

Թիվ 660-ը բովանդակում է ԺԵ. դարի չաղաթայական գրականության ներկայացուցիչ, բանաստեղծ Ալիշեր Նավայի «Մաեբուբ ուլ քուլուբ» (محبوب القلوب) («Սիրելի սրտեր») աշխատությունը (ամբողջական չէ), կրոնական բովանդակությամբ բանաստեղծություններ (քասիդներ, ներբողականներ, թերջիհ-ի բենդեր)՝ գրչության ժամանակն է հջր. 1344-45 [1926-27 թթ.], գրիչն է Մուհամմեդ Քասիմը:

Թիվ 939-ը բովանդակում է Էբուսուուդի, Ալի Էֆենդիի, Ահմեդ իբն Քեմալի ֆեթվաները, կրոնական երկու աշխատություն, դեղատոմսներ, հմայագրեր:

Թիվ 965-ը ներկայացնում է Հաքիքիի (Յուսուֆ Հաքիքի) բանաստեղծությունների ժողովածուն (ديوان حقيقي):

Թիվ 1035-ը բովանդակում է Ֆուզուլիի դիվանը (کتاب دیوان فضولی) եւ «Լեյլի եւ Մեջնուն»-ը (کتاب لیلى مجنون افصح المتكلمين فضولى بغدادى), պաշտոնական նամակի մի օրինակ:

Թիվ 848՝ Սաադիի «Գուլնայան»-ն է պարսկերեն՝ տողատակերում օսմաներեն ամբողջական թարգմանությամբ: Թարգմանությունը կատարվել է հետագայում ուն Իբրահիմի կողմից:

Այսպիսով Մատենադարանի օսմաներեն հավաքածուից մի փոքրաթիվ ձեռագրային⁷ խիստ սեղմ ներկայացմամբ անգամ, կարծում ենք, ընկալելի է օսմաներեն հավաքածուի նյութերի աղբյուրագիտական արժեքը՝ Արևելքի երկրների եւ ժողովուրդների պատմության, գրականության, կրոնի, իրավունքի, տոմարագիտության, բժշկության եւ այլ բնագավառների ուսումնասիրության համար⁷:

⁷ Պետք է նկատել նաեւ, որ ձեռագրերի նկարագրությանը եւ ցուցակագրմանը զուգընթաց իրականացվում է ուսումնասիրություն: Մատենադարանի թիվ 741 եւ թիվ 937 ձեռագիր ժողովածուներում ամփոփված ԺԵ.-ԺԶ. դարերի թուրք բանաստեղծ Մուղլալը Իբրահիմ Շահիդի Դեղեի «Թուհֆե-ի Շահիդի» (هذا كتاب شاعدى تحفة شاعدى) եւ թիվ 55, թիվ 983 ձեռագրերի՝ ԺԸ. դարի գրող-բանաստեղծ Մուհամմեդ Սունբուլ Զադե Վեհրիի հեղինակած «Թուհֆե-ի Սունբուլ Զադե» կամ «Թուհֆե-ի Վեհրի» (وآر آليه كان كهر دنياه بلديكم تحفة سنبل زاده) պարսկերեն-օսմաներեն չափածո եւ թիվ 229-ի «Հայերեն լեզվին անցած պարսկերեն հին բառեր» (ارمنى دلنه مخلوط اولئمشو فرس قديم الفاظلى), թիվ 230 ձեռագրի՝ Միրզա Մուհամմեդ Թադիի «Պարսկերեն Օսմաներեն բառարան», թիվ 462 ձեռագրի՝ Քերբելայի Մուլա Մուհամմեդ Հուսեյն իբն Քերբելայի Մուհամմեդի «Պարսկերեն-Օսմաներեն բառարան» սովորական բառարանների մեր ուսումնասիրության արդյունքներին մասնագետ րնթերցողը կարող է ծանոթանալ 2011 թ. հայագիտական եւ իրանագիտական 2-րդ միջազգային գիտաժողովի գիտական նյութերի ժողովածուում (տե՛ս **Ա. Ավետիսյան**, Մատենադարանի պարսկերեն թուրքերեն բառարանները. <<Հայագիտական եւ իրանագիտական երկրորդ միջազգային գիտաժողով>>, Գիտական հոդվածների ժողովածու, Երեւան, 2011, էջ 148-169):